



Հակոբ Պարոնյան

Պտոյտ մը Պօլսոյ թաղերու մէջ

ԼԳ, ԼԴ

ԼԳ.

ՏԵՐԻ ԳԻՒՂ

Այս գեղին մէջ պատուական գարեջուր կշինուի. ազգային գործերու վերաբերութեամբ գիտացիին թնրութիւնն յառաջ եկած է այս ընպելիքէն, գոր շատ կխմէ :

Քահանայ մը կայ, որ կկարդայ այս եկեղեցիին մէջ եւ կարդացած ժամանակը երբեմն յետելը կնայի եւ եկեղեցոյն մէջ մարդ մը տեսնելուն պէս գանձանակը կ'առնէ եւ կարդալով կսկսի պտըտցունել գանձանակն: Եկեղեցոյն մէջ այս քահանայէս գատ մարդ տեսնելը հրաշքի կարգ անցած է :

Հագիւ յիսուն վաթսուն տուն կայ հայու: Վարժարանին մէջ աշակերտները կկարդան Քերական, Սաղմոս եւ Նարեկ :

Բէրայէն հոս կ'երթան կենդանիները գարեջուր խմելու, եւ մեռեալներն ալ թաղուելու. վասնզի հոս փոխադրուած է Բէրայի գերեզմանատունը:

Օդն այնքան աղէկ է, որ ամեն կիրակի մեծ բազմութեամբ ամեն թաղերէ հոս կը դիմեն, քիչ մը օդ եւ շատ գարեջուր առնելու համար :

ԼԴ.

ԵԼՆԻ ԳԻՒՂ

Կամաց կամաց ազնուականներու բնակարան կդառնայ այս գիղն եւ աղքատներու քաւարան:

Գեղացին կաշխատի իր վարժարանն եւ եկեղեցին կանոնաւորութեան մէջ պահելու, եւ կյուսացուի, որ իրեն նպատակին հասնի :

Պճնասիրութիւնն հոս մեծ դեր կխաղայ: Կիները Պէօյիք Տէրէյի կիներուն հետ մրցելու համար ամեն գոհողութիւն կ' ընեն, եւ այրերն ալ իրենց քսակները միշտ բաց կը պահեն՝ գոհացնելու համար իրենց կիներուն պահանջումները: Կիները օրը չորս անգամ հագուստ կփոխեն, վասնզի նորածնութիւնն այս գիղիս մէջ ամսէ ամիս չփոխուիր, այլ երեք ժամը մի անգամ :

Բամբասանքն հոս ֆրանսերէն տեղի կ' ունենայ :

Չեն պակսիր հոս ազգասէր եւ ուսեալ տիկիներ, որք կխորհին ազգին վրայ ... բրինձի փոշի էն ետքը :

Այրերն երեկոները տուն մը կհաւարուին եւ վիսթ ով կգբաղին: Կիներն ալ պարելով, կամ պտոյտ ընելով, կամ դաշնակ գարնելով, կամ երգելով, կամ վիպասանութիւն կարդալով կգբօսնուն: Տնական գործերն աղախիններու յանձնուած են :

Օդը մաքուր է : Թերճէմանը Էֆքեար ի Տնօրէն Պ. Ճիվէլէկեան Բերայէն հոս կու գայ երբեմն մաքուր օդ առնելու Թերճէման ը Հաքիքաթ ին լեզուին փչելու համար :

Գիղիս մէջ քառասուն տուն կայ Հայու, չորս հարիւր գլխարկ կնկան եւ երկու հազար գոյգ կօշիկ :